

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1 (17/18)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտ. խորհրդի 04.10.2017թ. կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նա 34 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1. Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2017/2018 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:  
*Ձեկ՝ Վ.Ռ.Թադևոսյան*
2. Տեղեկատվություն 2017/2018 ուս.տարում ֆակուլտետի բակալավրիատի ու մագիստրատուրայի համալրման մասին:  
*Ձեկ՝ պրոֆ. Խ.Վ.Ներկարարյան*
3. Սույն թվականին առկա համակարգով ասպիրանտուրա ընդունվածների աստենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատումը:  
*Ձեկ՝ ամբ. վարիչներ*
4. 2017/2018 ուս.տարվա 1-ին կիսամյակի ֆակուլտետի անվանական կրթաթոշակների թեկնածությունների հարցը:  
*Ձեկ՝ պրոֆ. Խ.Վ.Ներկարարյան*
5. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..*

**Լսեցին-** Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2017/2018 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:

**Արտատայտվեցին.-** Տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցեցին ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Խ. Վ. Ներկարարյանը, պրոֆեսորներ Գ.Ս.Հաջյանն ու Ֆ.Վ.Գասպարյանը:

**Որոշեցին.-** Նախագծում հաշվի առնել կատարված առաջարկները և հաստատել աշխատանքային պլանը:

**Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..**

**Լսեցին-** Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ. Վ. Ներկարարյանի տեղեկատվությունը 2017/2018 ուս.տարում ֆակուլտետի համալրման մասին: Զեկուցողը բերեց թվային տվյալներ ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի ընդունելությունների վերաբերյալ: Նշվեց, որ չնայած քիչ թվով թափուր տեղերի, անհրաժեշտ է աշխատել ուսումնական ծրագրերի արդիականացման ուղղությամբ:

**Արտատայտվեցին-** պրոֆեսորներ Խ.Վ. Ներկարարյանը, Յու.Ն. Ավետիսյանը և Գ.Ս. Հաջյանը:

**Որոշեցին-** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ..**

**Լսեցին-** - Ե.27.01 "Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա" մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ Արամ Սամվելի Հովհաննիսյանի թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**Որոշեցին-** 1) ասպիրանտ *Արամ Հովհաննիսյանի* թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ "Տարրերի պարամետրերի վատթարացման հաշվի առնմամբ ինտեգրալ սխեմաների նախագծման միջոցների մշակումը և հետազոտումը":

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին**:

**Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ..**

**Լսեցին-** ֆակուլտետի 2017/2018 ուս.տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակների թեկնածությունների առաջադրման հարցը

**Արտահայտվեցին-** ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը, ԱՊՏՖ ամբիոնի վարիչ Գ.Բ. Ալավերդյանը, Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ. Հարությունյանը:

**Որոշեցին-** Հաշվի առնելով ուսման գերազանց առաջադիմությունը և գիտահասարակական ակտիվությունը՝ անվանական կրթաթոշակների թափուր տեղերը հասկացնել հետևյալ մագիստրոսներին:

**Էմիլ Միրզաբեկյանի անվան կրթաթոշակ**

1. Ստեփանյան Դավիթ Յրաչի– մագիստրատուրա, 2-րդ կուրս

**Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ**

2. Դազարյան Գագիկ Արամայիսի- մագիստրատուրա, 2-րդ կուրս

**Յուրի Բախշյանի անվան կրթաթոշակ**

3. Գրիգորյան Տիգրան Օլեգի– մագիստրատուրա, 2-րդ կուրս

**Յակոբ Զարոբյանի անվան կրթաթոշակ**

4. Ներսիսյան Դավիթ Վարուժանի – մագիստրատուրա, 2-րդ կուրս

**Օրակարգի ընթացիկ հարցերում**

**Լսեցին՝** - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 2-րդ տարվա ասպիրանտ **Գևորգ Հարությունի Շահխաթունու** գիտական ղեկավարի փոփոխության և աստենախոսության թեմայի հաստատման մասին հարցը:

**Արտահայտվեց** – ամբիոնի վարիչ և ասպիրանտի գիտական ղեկավար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր., Վ. Մ. Հարությունյանը նշեց, որ հաշվի առնելով իր խիստ զբաղվածությունը և այն, որ ասպիրանտ Գ. Շահխաթունին փաստացիորեն աշխատում է առաջատար գիտաշխատող Վալերի Միքայելի Առաքելյանի հետ, առաջարկեց Գ. Շահխաթունու գիտական ղեկավար նշանակել Վ. Մ. Առաքելյանին:

*Որոշեցին* – Գևորգ Հարությունի Շահխաթունու գիտական ղեկավար նշանակել Վալերի Միքայելի Առաքելյանին, ատենախոսության թեման թողնելով նույնը՝ «Կիսահաղորդիչ-գազ բաժանման սահմանի հետազոտումը իմպենդանսային սպեկտրոսկոպիայի եղանակով»:

Խորհրդի նախագահ,

Ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր

Խ.Վ. Ներկարարյան

Գիտքարտուղար

Վ.Ռ. Թադևոսյան